

**ՌԻՍԱՍՏԱՆԻ ԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
(ԱՐԵՎՄՏԱՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ (1912—1914 թթ.))**

Ռ. Բ. ԱԴԱՄՅԱՆ

Արևմտահայաստանում բարենորոգումներ անցկացնելու հարցը մեծ տերությունների ներկայացուցիչների միջև թանակցությունների առարկա դարձավ 1913 թ. հունիսին: Հարցի քննարկման հետագա ձգձգումը կհակասեր բալկանյան ճգնաժամի ընթացքում Ռուսաստանի ղեկավար շրջանների կողմից հայերին զսպվածության կոչ անող հորդորներին և պատերազմի ավարտից անմիջապես հետո հարցին նպաստավոր լուծում տալու խոստումներին¹: Այդ իսկ պատճառով, արդեն 1913 թ. հունիսի 6-ին, Բալկանյան առաջին պատերազմի ավարտից մեկ շաբաթ անց, Ռուսաստանը դիմեց մեծ տերություններին Կ. Պոլսում իրենց դեսպանների միջոցով Արևմտահայաստանում բարենորոգումների հարցը քննարկելու առաջարկությամբ²: Այժմ արդեն, ռուսական կառավարության կարծիքով, կարելի էր ձեռնամուխ լինել հայկական հարցի քննարկմանը՝ առանց Թուրքիայի փլուզումը հարուցելու վտանգի³:

Հունիսի 30-ին Կ. Պոլսում մեծ տերությունների դեսպանները առաջին անգամ հավաքվեցին նիստի՝ նվիրված հայկական բարենորոգումների հարցին: Գերմանական կողմի պահանջով ռուսական ծրագիրը ներկայացվեց դեսպանությունների դրագոմանների քննարկմանը, որտեղ քննության դրվեց նաև Թուրքական ծրագիրը: Դրագոմանների խորհրդակցությունը բացվեց հունիսի 3-ին, ավստրիական դեսպանատան շենքում՝ Ենիբյույում: Առաջարկվող ռուսական ծրագիրը հիմնական կետերում կրկնում էր Կ. Պոլսի հայկական Պատրիարքարանի հարուցած պահանջները⁴: Հատկանշական էր, որ մնացած մեծ տերություններից ոչ մեկը հանդես չեկավ բարենորոգումների սեփական ծրագրով: Ինչ վերաբերում է Թուրքական ծրագրին, ապա դրա հետապնդած հիմնական նպատակը ոչ թե իրական բարենորոգումների մշակումն ու գործադրումն էր, այլ տերությունների միջամտությունը կանխելու միտումը: Թուրքական կառավարության ազդեցիկ անդամներից կազմված հանձնաժողովը (մեծ վեզիրը, արտաքին գործերի, ներքին գործերի, լուսավորության և ֆինանսների մինիստրներ) 1912 թ. դեկտեմբերի սկզբներին շուտափույթ մի ծրագիր մշակեց և դեկտեմբերի 8-ին կայացած նիստին հրավիրեց հայ գործիչների, որոնք ճանաչված էին որպես օտար միջամտության հակառակորդներ և պատրիարքարանում պաշտոնական դիրքեր չէին զբաղեցնում: Բավական չէ, որ այդ ծրագրում շարենորոգումներ կենսագործելու ոլորտից դուրս էին թողնված Սեբաստիայի և Էրզրումի վիլայեթները, դրանում խոսք անգամ չկար բարենորոգումների կենսագործման միջազգային երաշխիքների մասին, իսկ գեներալ-նահանգապետը լինելու էր լոկալ Թուրքա-

¹ Архив внешней политики России (այսուհետև՝ АВІР), ф. П. А., 1913 г., ед. хр. 3460, л. 29.

² Ժողովածու դիպլոմատիկական զոդումենտների, Բարենորոգումները Հայաստանում, 1912 թ. նոյեմբերի 26—1914 թ. մայիսի 10-ը, Թիֆլիս, 1915, էջ 31:

³ Л. Г. Истиягин, Экспансия германского империализма в Турции и русско-германские противоречия по армянскому вопросу (1912—1914 гг.). (Из истории агрессивной внешней политики германского империализма, М., 1959, с. 37).

⁴ АВІР, ф. П. А., 1913 г., ед. хр. 3467, л. 51—82.

կան պաշտոնյա: Այդ իսկ պատճառով ներկայացված ծրագիրը մերժվեց նույնիսկ կառավարության վստահությունը վայելող անձանց կողմից⁵:

Սակայն անգամ նման ծրագիրն անընդունելի համարեցին 1913 թ. հունվարի 10-ի հեղաշրջումից հետո վերստին իշխանության գլուխ անցած երիտթուրքերը, որոնք հրապարակ հանեցին բովանդակ կայսրության մեջ բարենորոգումներ մտցնելու վերաբերյալ իրենց սեփական ծրագիրը: Առաջ քաշելով ամբողջ կայսրությունում բարենորոգումներ կատարելու չափազանց հեղհեղուկ և ոչնչի չպարտավորեցնող մի նախագիծ, երիտթուրքերը բացահայտորեն անտեսում էին Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակի առանձնահատկությունները⁶: Մեծ տերությունների քննարկմանը ներկայացված թուրքական ծրագրի առկայությունն ինքնըստինքյան մի անհեթեթ իրավիճակի դրսևորման փաստ էր, որտեղ զանգվածային կոտորածների և վայրագ բռնակալության մեջ մեղադրվող կողմը հանդես էր գալիս իր իսկ վարած ազգային քաղաքականության մեղքով առաջացած հարցի լուծումն առաջարկողի դերում: Այդ իսկ պատճառով, որպես ելակետային նախագիծ թուրքական ծրագիրը ընդունելու համար գերմանական կողմի գործադրած ճիգերն անհաջողության մատնվեցին:

Արևմտահայաստանում բարենորոգումների հարցի արծարծման ողջ ընթացքում չափազանց մեծ էր կայզերական Գերմանիայի դիրքորոշման նշանակությունը: Այդ հանգամանքը պայմանավորված էր նրանով, որ տրվյալ հարցում ինչպես Ռուսաստանը Նոյակ Համաձայնության, այնպես էլ Գերմանիան Նոյակ Դաշինքի շրջանակներում հանդես էին գալիս առաջատարի դերում: Թեև Անգլիայի և Ֆրանսիայի շահերը նույն ռեգիոնում հաճախ ընդհարվում էին Ռուսաստանի քաղաքական շահերի հետ, այնուամենայնիվ, եվրոպական մայրցամաքում Գերմանիայից բխող մահացու վտանգը պարտադրում էր նրանց շատ դեպքերում համակերպվել առաջնությունը Ռուսաստանին զիջելու մտքի հետ: Դեռևս 1913 թ. գարնանը Անգլիայի արտաքին գործերի մինիստր է. Գրեյը մի առիթով ասել էր. «...դա լուրջ ճեղքվածքների կառաջացնի Ռուսաստանի հետ մեր ունեցած հարաբերությունների մեջ, ինչը ուղղակի կործանարար կլինի մեզ համար»⁷: Եթե նույնիսկ ընդունենք, որ քաղաքական կոնյունկտուրայից ելնելով չափազանցությանը տուրք տալու որոշակի միտում կար տրված գնահատականի մեջ, այնուամենայնիվ, այն անվիճելիորեն շատ մոտ էր ճշմարտությանը: «Միմիայն Ռուսաստանը, — գրում էր Զերիլը, — կարող է դաշնակիցներին ապահովել զգալի թվական գերակշռություն, որը կպահանջվի կենտրոնական տերությունների բանակները ջախջախելու համար»⁸: Առանց Ռուսաստանի օժանդակության Գերմանիայի հետ առճակատման հնարավորությունը էլ ավելի սոսկումով էին նայում Ֆրանսիայի ղեկավար շրջանները: Սակայն այս ամենի գիտակցումը ամենևին էլ չէր խանգարում, որպեսզի Կ. Պոլսում Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանները հունիսի 17-ին իրենց նախնական քննարկմանը ներկայացված ռուսական ծրագրին ամբողջությամբ վերցրած հավանություն տալու հետ մեկտեղ (քանի որ որոշակի պատասխան տալուց խուսափելն այլևս անհնար էր), միաժամանակ այդ նույն ծրագրի իրագործման ճանապարհը խոչընդոտելու ուղի ընտրեին: Եթե Արևմտահայաստանում ռուսական աղղեցողության ուժեղացումը կասեցնելու մեջ Անգլիայի և Ֆրանսիայի շահագործվածությունը դրսևորվում էր միատեսակ, ապա առաջինի գործողություններում պարզորոշ

⁵ Будущее устройство Армении по официальным документам Оранжевой книги, трактующей реформы в Армении, Пгр., 1915, с. 9—10.

⁶ Նույն տեղում, էջ 9—12.

⁷ П. В. Жогов, Дипломатия Германии и Австро-Венгрии и первая Балканская война 1912—1913 гг., М., 1969, с. 244.

⁸ См. В. В. Готлиб, Тайная дипломатия во время первой мировой войны, М., 1960, с. 119.

երևան էր գալիս նաև բարենորոգումների հարցի միջոցով գերմանա-ռուսական հակասությունները խորացնելու միտում: Դրանից ձգտում էին խուսափել Ֆրանսիայում, քաջ գիտակցելով, որ եթե Ռուսաստանը խճճվի փոքր-ասիական գործերում, ապա դրանով կթուլացնի Եվրոպայում Գերմանիայի դեմ իր գրաված դիրքերը:

Գերմանիայի դաշնակիցները՝ Ավստրո-Հունգարիան և Իտալիան, Օսմանյան կայսրությունում հիմնականում հետապնդում էին տնտեսական շահեր: Ավստրո-Հունգարիայի կողմից Ֆոսնիայի ու Վերցեգովինայի և Իտալիայի կողմից Տրիպոլիտանիայի և Կիրենաիկայի գրավումից հետո նրանց և Օսմանյան կայսրության միջև հետագա տարածքային-քաղաքական վեճերի և բախումների առիթներ դեռևս չկային: Թուրքիայում ստիպված էին հաշտվել կատարվածի հետ, իսկ Ավստրո-Հունգարիան և Իտալիան Օսմանյան կայսրությունում տվյալ պահին ավելի չէին էլ հավակնում: Այն հանգամանքը, որ Ավստրո-Հունգարիայի և Իտալիայի հետաքրքրությունները Օսմանյան կայսրությունում սահմանափակվում էին տնտեսական շրջանակներով, բուլղոսի էլ, սակայն, չէր նշանակում, որ միջազգային քաղաքականության շատ այլ պրոբլեմային հարցերում նրանք չէին աշխատում իրենց շահերին համապատասխան օգտագործել Օսմանյան կայսրությունում ծավալվող իրադարձությունները՝ որպես զուտ քաղաքական խաղաթուղթ: Ռուսաստանի ուղադրությունը Բալկաններից շեղելու (այս հարցում առանձնակի շահագրգռվածություն էր ցուցաբերում Ավստրո-Հունգարիան), Ռուսաստանի և նրա դաշնակիցների միջև սեպ խրելու, Ռուսաստանին որպես ագրեսիվ նկրտումներ ունեցող և համընդհանուր խաղաղությանը սպառնացող կողմ ներկայացնելու նպատակով Եռյակ Դաշինքի տերությունները չէին խորշում ոչնչից:

Հայկական բարենորոգումների հարցը քննարկելու համար մեծ տերություններին արված Ռուսաստանի պաշտոնական առաջարկից մեկ օր անց՝ հունիսի 7-ին Թուրքիայում գերմանական դեսպան Վանգենհայմը հապճեպ մի հեռագիր հղեց Բեռլին, որտեղ շտապում էր իր դատողությունների մասին տեղյակ պահել կենտրոնին, որպեսզի այնտեղ չսխալվեին և չընդառաջեին ռուսական ծրագրին: Հեռագրում ընդգծված հիմնական միտքը կիզակենտրոն էր հետևյալ պարբերությունում. «Գերմանական շահերը պահանջում են հենց սկզբից ծայրահեղորեն սահմանափակել ծրագիրը»⁹: Սակայն զուր էր անհանգստանում Վանգենհայմը: Բեռլինում ավելի արմատականորեն էին տրամադրված: Իսկապես, ի՞նչ «ընդառաջման» մասին կարող էր խոսք լինել. եթե Թուրքիայում գերմանական կառավարության լիազոր ներկայացուցիչ, դեսպան Վանգենհայմը մտահոգված էր լուկ ռուսական ծրագրի «ծայրահեղ սահմանափակմամբ», ապա այդ կառավարության մեջ պետական քարտուղարի օգնական Յիմերմանի մտահոգությունները դրսևորվում էին բոլորովին այլ ուղղությամբ: Ոգեշնչված հայերին Բաղդադի երկաթուղու երկայնքով «վերաբնակեցնելու» ոռհրբախյան տխրահռչակ զաղափարով, նա յուրաքանչյուրի շրջանում չէր թաքցնում իր նվիրական մտքերը՝ «...ըստ էության հայերը Գերմանիային պետք չեն: Հայերով բնակեցված Հայաստանը վնասակար է նրա (Գերմանիայի) շահերին»¹⁰:

Հատկանշական էր, որ, խիստ թշնամաբար տրամադրված լինելով բարենորոգումների ռուսական ծրագրի դեմ և անելով ամեն ինչ այն տապալելու համար, Գերմանիան իր քաղաքական պրակտիկ գործունեության մեջ չկառողացավ ամբողջությամբ վիժեցնել այն և ստիպված էր լրջորեն հաշվի նստել ռուսական ծրագրում առաջ քաշված պահանջների հետ: Անաչառ լինելու համար չպետք է շրջանցել նաև այն հանգամանքը, որ գերմանական ղիվանագետները թուրքական կառավարողներին համոզում էին Թուրքիայում

⁹ Л. Г. Истягин, *изв.* *աշխ.*, էջ 40:

¹⁰ Международные отношения в эпоху империализма (*այսուհետև՝* МОЭИ), серия III, 1914—1917 гг., т. I, М.—Л., 1931, с. 119.

որոշ բարենորոգումների անհրաժեշտության խնդրում (քանի որ միայն այդ միջոցով նա կկարողանար դիմագրավել ցարիզմի ճնշմանը), քաղ գիտակցելով, որ իրենց կողմից Արևմտահայաստանում բարենորոգումներ անցկացնելու այսօրվա լիակատար թոյլտվություններ միայն դեպի ինքնամեկուսացում և իրենց կողմից իրադարձությունների զարգացման վրա ներգործելու հնարավորությունից, քանի որ հայկական հարցը Բեռլինի վեհաժողովից հետո դարձել էր միջազգայնացված հարց, իսկ թուրքական դժնդակ իրավա-նությունն ապամաններում բարենորոգումներ անցկացնելու անհրաժեշտությունը անցած տարիների ընթացքում ոչ միայն չէր վաղանգվել, այլև ծայրահեղ հրատապություն էր ստացել:

Հիմնական պատճառը, որ ի վերջո Գերմանիան զբաղեցրեց բանակցությունների սեղանի շուրջ իր տեղը, այն էր, որ «Գերմանիան ... բանակցությունների մեջ մտավ մեզ հետ հայկական հարցի առթիվ երկու նպատակով. նախ, որպեսզի հարմար ժամանակին հիշեցնի Դռան, որ շնորհիվ իր միջամրտության նա զսպեց Ռուսաստանին պահանջելու լայն բարենորոգումներ: Երկրորդ, որպեսզի գրավի դեպ իրեն հայերի ուշադրությունը...»¹¹: Իրոք, «այդ խնդրում վստահավոր ինքնավարությունից Թուրքիան պաշտպանողի գերը բարդացել էր Գերմանիայի համար հայ ժողովրդի համակրանքը ձեռք բերելու ցանկությամբ...»¹²:

Փաստերը հիմք են տալիս ենթադրելու, որ մեծ տերությունների քննարկմանը ներկայացված ռուսական պատրաստի ծրագրի առկայությունը ինչ-որ տեղ հանկարծակիի բերեց գերմանական դիվանագիտությանը: Հակառակ դեպքում, նա նախօրոք ավելի լուրջ կովաններով կգինվեր ռուսական ծրագրի դեմ, քան դրան թուրքական անբովանդակ ծրագրի հակադրումը կլիներ: Չունենալով ռուսական ծրագիրը ձախողելու կողմնակի ճանապարհ, Բեռլինում ստիպված էին բռնել ուղղակի առձևատման ուղին: Ժողով է, Արևմտահայաստանում դրությունը «ռուսումնասիրելու» պատրվակով փորձեցին անորոշ ժամանակով հետաձգել բարենորոգումների հարցի քննարկումը, բայց դրանից ոչինչ դուրս չեկավ¹³: Որքան իրական էին դառնում բարենորոգումների քննարկումն ու ընդունումը, այնքան ավելի արտառոց ու անտրամաբանական էին հնչում բերվող հակափաստարկները: Ուրիշ էլ ինչպե՞ս կարելի է գնահատել Գերմանիայի և նրա դաշնակիցների արած վերապահումը, որ կհամաձայնվեն միայն այնպիսի բարենորոգումների հետ, որոնք չեն խախտի «սուլթանի սուվերենությունը»: Եվ դա ասվում էր այն ժամանակ, երբ «մեծ տերությունների ողջ պրակտիկ գործունեությունը հիմնվում էր սուլթանի սուվերենության ոտնահարման վրա»¹⁴:

Սակայն այս բոլոր փորձերը ցանկալի արդյունք չտվեցին, և Գերմանիան, ինչպես արդեն ասել ենք, ստիպված էր գնալ ռուսական ծրագրի ուղղակի առձևատման և նրա հիմնական կետերի խոչադարման ճանապարհով: Հուլիսի 23-ին Օռյակ Դաշինքի տերությունները հանդես եկան համատեղ հայտարարությամբ, որտեղ պահանջում էին բարենորոգումների հիմքում դնել թուրքական ծրագիրը, իսկ ռուսականից վերցնել միայն երկրորդական կետերը: Ռուսաստանը պատասխանեց մերժումով և արդեն հաջորդ օրն իսկ դեսպանությունների դրագումաններից կազմված հանձնաժողովը դադարեցրեց իր աշխատանքները: Գերմանիայի վարչապետը հայկական բարենորոգումների հարցը մտքից փակուղի: Կ. Պոլսում ռուսական դեսպանությունը

¹¹ Ջ. Ս. Կիրակոսյան, Ռ. Գ. Սահակյան, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 351:

¹² Ա. Մանդելշտամ, Երևանում թուրքերի պետությունը. Պատմա-քաղաքական ակնարկ, Ս. էջմիածին, 1916, էջ 63:

¹³ Л. Г. Истиягин, նշվ. աշխ., էջ 40:

¹⁴ Նույն տեղում:

դրագումանների հանձնաժողովի նիստերի արձանագրությունը տրամադրեց հայերին, մի բան, որ պատռեց Գերմանիայի՝ հայասեր ներկայանալու դիմակը և առաջ բերեց հայկական ողջ մամուլի զայրույթն ու վրդովմունքը:

Եթե զուգահեռներ անցկացնելու լինենք հայկական բարենորոգումների և նույն ժամանակաշրջանում միջազգային քաղաքականության ասպարեզում դիվանագիտական պայքար հրահրող այլ պրոբլեմային հարցերի միջև, ապա կարելի է առանձնացնել հետևյալը. 1913 թ. հունիսի 30-ին սկսվեց Բալկանյան երկրորդ պատերազմը Բուլղարիայի և նրա երեկվա դաշնակիցներ Սերբիայի, Հունաստանի, Չեռնոգորիայի միջև, որոնց աջակցում էր նաև Ռումինիան: Թուրքիայում որոշեցին օգտագործել հարմար պահը և վերագրավել Բալկանյան առաջին պատերազմի ժամանակ կորցրած Ադրիանուպոլիսը: Զուտ ռազմական տեսակետից դա առանձնակի դժվարություն չէր ներկայացնում, քանի որ մի քանի ճակատով կոմիդ բուլղարական բանակը կրում էր մեկ պարտություն մյուսի հետևից և կարճ ժամանակում ջախջախվեց: Ահա նման պայմաններում թուրքական զորքերը մտան Ադրիանուպոլիս և գրավեցին քաղաքը: Այստեղ մեզ համար հետաքրքիր են երկու հանգամանք: Առաջինը այն է, որ նման քայլով Թուրքիան փաստորեն խախտեց Լոնդոնում մայիսի 30-ին Բալկանյան առաջին պատերազմին վերջ տված պայմանագիրը, որտեղ վավերացվել էին հետպատերազմյան սահմանները: Բնականաբար հարց է ծագում, թե ինչպես արձագանքեցին մեծ տերությունները իրենց միասնական համաձայնությամբ ընդունված որոշման նման կոպիտ ոտնահարման փաստին: Ավելորդ չէր լինի հետամուտ լինել նաև Բուլղարիայի վարքագծին: Միակ տերությունը, որը իրար անցած աշխատում էր Ադրիանուպոլիսը վերագրվելու Բուլղարիային՝ Ռուսաստանն էր, որ նման ճանապարհով ձգտում էր կանխել Բուլղարիայի որոշակիորեն ուրվագծվող թեքումը Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի կողմը: Ռուսաստանը առաջարկեց մեծ տերություններին նավատորմի դեմարշ կատարել Թուրքիայի առափնյա ջրերում՝ նախազգուշացնելով վերջինիս հետ կանգնել Ադրիանուպոլիսը զենքի ուժով գրավելու մտադրությունից: Գերմանիայի դիմադրությունը ձախողեց միասնական դեմարշի իրագործումը: Այդ ժամանակ Ռուսաստանը դիմեց Անգլիային և Ֆրանսիային, առաջարկելով նույն բանը կատարել միայն Անտանտի ուժերով: Անգլիան և Ֆրանսիան խուսափեցին որոշակի պարտավորություններ ստանձնել և փաստորեն վիժեցրին նաև Անտանտի ուժերով դեմարշ կազմակերպելու Ռուսաստանի փորձը: Ոչինչ դուրս չեկավ նաև Թուրքիան ֆինանսական բոլկոտի ենթարկելու՝ Ռուսաստանի հուսահատ փորձերից, քանի որ Օսմանյան կայսրության հիմնական պարտատերը՝ Ֆրանսիան մերժեց այդ առաջարկը: Այդ ժամանակ Ռուսաստանը սկսեց սպառնալ, որ եթե Թուրքիան չենթարկվի տերությունների կամքով Լոնդոնում ընդունված որոշմանը, ապա ինքը ստիպված կլինի միայնակ դիմել որոշակի գործողությունների: Իրոք, ձեռք Ռուսաստանը, ինչպես շարունակ պնդում էր գերմանական դիվանագիտությունը, միայն առիթ էր փնտրում Հայաստանը օկուպացնելու համար, ապա այժմ այդ առիթը ներկայացել էր՝ անկախ բարենորոգումների հետ կապված հարցից¹⁵: Զե՞ որ Թուրքիայի դեմ գործողությունների դիմելու միակ ճանապարհը անցնում էր Արևմտյան Հայաստանի վրայով (քանի որ զենքի ուժով նեղուցներն անցնելը Ռուսաստանին չէին թողնի ոչ հակառակորդները, ոչ դաշնակիցները, իսկ եվրոպական մասով առաջանալը կապված էր հսկայական դժվարությունների հետ, բացի նրանից, որ անխուսափելի բախում կառաջացներ Ավստրո-Հունգարիայի հետ), որտեղ շատ քիչ թվով թուրքական զորքեր կային և որի հայ ազգաբնակչությունը հրճվածությամբ կդիմավորեր իրենց ազատարարներին՝ ռուսական բանակին: Հիշեցնենք, որ նման միջամտության ողջ պատասխանատվությունն ընկնում էր թուրքական կողմի վրա՝ որպես նախահարձակ և

15 Նույն տեղում, էջ 46:

ազդեցության շնորհիվ տեղի ունեցավ, իսկ եվրոպական տերությունները զրկված կլինեին Ռուսաստանի դեմ արդարացի հիմնավորում ունեցող քայլերի դիմելու հնարավորությունից, քանի որ Ռուսաստանը անվանապես հանդես էր գալու լոնդոնում մեծ տերությունների համատեղ ընդունած որոշումները պահպանողի դերում։ Սակայն Ռուսաստանում ոչ միայն նպատակադրված չէին զենքի ուժով գրավել Արևմտահայաստանը, այլև վախենում էին, որ հայերը, ռուսական դիվանագիտության գործողությունները ընդունելով որպես ապստամբելու ազդանշան, արյունահեղ ընդհարումների դուռ կրացնեն և այդ դեպքում իրենք ուղղակի ստիպված կլինեին միջամտել¹⁶։ Արդյունքը եղավ այն, որ Մերձավոր արևելքում գերմանական իմպերիալիզմի միջաբերդ Թուրքիայում, գերմանական զենքով զինված և գերմանական ռազմական խորհրդականների վարժեցրած թուրքական բանակը նախահարձակ եղավ և գրավեց Բուլղարիային պատկանող տարածքի մի մասը, իսկ այդ նույն Բուլղարիան, խզելով իր կապերը Ռուսաստանի հետ, հակվեց դեպի Գերմանիան և Ավստրո-Հունգարիան։

Եվ երկրորդը. ինչպես գիտենք, թուրքական զորքերը սկսեցին շարժվել դեպի Ադրիանուպոլիս, երբ Ենիքյում հայկական բարենորոգումների հարցի քննարկումը գտնվում էր իր ամենահեռու շրջանում։ Ավելորդ է ասել, որ թուրքական կողմը ձեռնպահ կմնար նման հանդուգն քայլի դիմելուց, եթե վստահ չլինեիր թիկունքի ամրության վրա, այն բանի վրա, որ հյուսիսից և ոչ մի «ռուսական վտանգ» չի սպառնում։

Հայկական բարենորոգումների նկատմամբ թուրքական իշխանությունների պաթոլոգիական ատելությունն արմատները սնվում էին պանթուրքիզմի և պանիսլամիզմի հետադիմական գաղափարներից¹⁷։ Այստեղից էլ իր հերթին ծնունդ էին առնում Մարոկկոյից մինչև Ալթայ ձգվող տարածքներում Թուրքիայի գերիշխանությամբ իսլամական միացյալ կայսրություն հիմնելու ցնորական պլանները։ Ինչպես նշում էր «Միություն և Առաջադիմություն» կուսակցության պարագլուխներից և հիմնական գաղափարախոսներից մեկը՝ դ-ր Նազըմը, «Իրենց քաղաքական ծրագրի իրականացման նախապայմանը հայկական հարցի արմատական լուծումն է... Պատկերացրեք մի պահ արևելյան նահանգներում հայկական մի պետության կազմվելը, նման մի պետություն տապանաբարն է թուրանական ծրագրին»¹⁸։ Առանձնակի խորաթափանցություն պետք չէ հասկանալու համար այն միտքը, որ հայկական բարենորոգումների ձախողումը առաջին քայլը պետք է դառնար հեռու զնացող նվաճողական քաղաքականության իրագործման ճանապարհին։

Սակայն, մյուս կողմից, թուրքական պրակտիկ դիվանագիտության տատանումները հասնում էին ապշեցուցիչ չափերի, և այս երևույթը շարունակվեց ընդհուպ մինչև Թուրքիայի կողմից Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտնելը։ Նման «զիզազաձև» դիվանագիտության օրինակներ կարելի է շատ բերել, բայց սահմանափակվենք մեզ հետաքրքրող նյութի հետ անմիջականորեն առնչվող մեկով։ Ադրիանուպոլսի հետ կապված հանգամանքներից ծնունդ առած ճգնաժամի սկզբում՝ 1913 թ. հուլիսի 16-ին, Թուրքիայի մեծ վեզիր Սալիդ Հալիմը դիմեց Թուրքիայում ռուսական դեսպան Գիրսին, ի հատուցումն Ադրիանուպոլիսը թուրքական զորքերի կողմից գրավելու՝ Ռուսաստանի համաձայնության, բավարարել վերջինիս բոլոր պահանջները Արևմտահայաստանում բարենորոգումների և երկաթուղիներ կառուցելու հարցում¹⁹։ Սալիդ Հալիմի առաջարկը հետաքրքիր է այն իմաստով, որ հերքում էր գերմանական թեզը, այն է՝ ռուսական նախագծի կենսագործումը հավասարազոր է Ասիական Թուրքիայի մասնատմանը։ Թուրքական

¹⁶ АВПР, ф. Канц., 1913 г., ед. хр. 115, л. 13.

¹⁷ Հր. Ռ. Սիմոնյան, Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 286—287.

¹⁸ Արարատ, 8. IX. 1963.

¹⁹ АВПР, ф. Канц., 1913 г., ед. хр. 113, л. 423.

կառավարությունը դա բնավ էլ այդքան վտանգավոր չէր համարում: Բայց չէ՞ որ մի «կիսանկախ Հայաստան» կարող էր դառնալ թուրանական գաղափարի տապանաքարը. ուրեմն ի՞նչ համեմատություն Ադրբեյջանական նման մի փոքրիկ քաղաքի գրավման և այդ ամենի միջև:

Ինչպես վերևում տեսանք, հուլիսի 23-ին Նոյակ Դաշինքի տերությունների համատեղ հայտարարությամբ ներկայացված պահանջը հայկական բարենորոգումների հարցը մտցրեց փակուղի: Ռուսական և գերմանական տեսակետների անմիջական բախումից իրապես հառնեց բանակցությունների լիակատար տապալման հեռանկարը: Սակայն նման հեռանկարը չէր բավարարում կողմերից և ոչ մեկին: Ուստի երկու երկրների դիվանագետներն էլ տենդորեն ելք էին փնտրում ստեղծված իրադրությունից:

Ինչպես արդեն նշեցինք, Ռուսաստանում հակված չէին դիմել զենքի, առավել ևս այժմ, երբ ողջ ուշադրությունը կենտրոնացված էր Բալկանյան երկրորդ պատերազմին: Ուստի որպես հանգուցալուծման միակ հնարավոր ճանապարհ մնացել էր դիվանագիտական կոմպրոմիսների ուղին: «Բայց ռուսական դիվանագիտությունը ուրիշ միջոց չունեի բարենորոգումների հարցն առաջ մղելու գործում, բացի իր ծրագրի պահանջների արմատական կրճատումից: Նրանք ստիպված էին դիմել այդ քայլին: Սեպտեմբերի 15-ին Գիրսը, վանդենհայմի հետ ունեցած մասնավոր զրույցի ժամանակ, հանեց սեկտորների սահմաններին և կազմին վերաբերվող ռուսական հիմնական պահանջները: Մի քանի օրվա ընթացքում մանրամասն մշակվեց 6 կետից բաղկացած մի համաձայնագիր, որը երկու հակառակորդներն էլ պարտավորվեցին պաշտպանել Թուրքիայի առջև²⁰, Այս համաձայնագիրն էլ դարձավ այն առանցքը, որի շուրջը համախմբվեցին բարենորոգումների հարցի հետ առնչվող բոլոր պրոբլեմները և որը ի վերջո հանգեցրեց հունվարի 26-ի (փետրվարի 8-ի) պայմանագրին: Հետաքրքիր է, որ դեռևս 1912 թ. դեկտեմբերի 17-ին Գիրսը Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Դ. Սազոնովին պարզաբանում էր, որ «հայերի առաջին և ամենանշանավոր պահանջն է ստանալ այս կամ այն ձևով ռուսական կամ միջազգային երաշխիքներ հիշյալ վայրերի համար, թե ի՞նչ բնույթ և բովանդակություն են ունենալու ապահովված բարենորոգումները, երկրորդական նշանակություն ունի նրանց համար²¹: Դրան իր անվերապահ համաձայնությունն էր հայտնում Սազոնովը 1913 թ. հուլիսի 25-ին Բեռլինում ռուսական գործերի հավատարմատար Բրոնկեսկուն գրած իր նամակում: Վերջին վերաբերում է երկրորդ կետին (խոսքը միջազգային երաշխիքների մասին է—Ռ. Ա.), պետք է ասել, որ, համաձայն Մ. Ն. Գիրսի միանգամայն արդարացի նկատառմանը, դրանում զիջել, նշանակում է հրաժարվել ամեն մի բարենորոգումից Հայաստանում...»²², Բայց արդեն 1913 թ. վերջին և 1914 թ. սկզբին ռուսական դիվանագիտությունը, անձամբ Սազոնովը, այն աստիճան հրապուրվեցին «երկրորդական նշանակություն ունեցող հարցերում» գերակշռություն ձեռք բերելու մտքով, որ միանգամայն հնարավոր ձախողման առջև կանգնեցրին երկարատև և աներևակայելիորեն բարդ բանակցությունների միջոցով ձեռք բերած կոմպրոմիսային որոշումների իրագործումը: Ռուսական մինիստրը դեմ չէր նույնիսկ մի հսկայական շրջան կատարելուց հետո կրկին վերադառնալ ելման կետ և նորից սեղանին դնել ռուսական ծրագիրը՝ իր սկզբնական տարբերակով²³: Այնինչ, հայկական բարենորոգումների հարցի հետ կապված անցուղարձին քաջ իրազեկ մի անձնավորություն՝ Զավեն պատրիարքը, ի նկատի ունենալով Արևմտահայաստանի ներքին գավառներում տիրող իրա-

²⁰ Л. Г. Истягян, *нշվ. աշխ.*, էջ 48, Համաձայնագրի 6 կետերի մասին տե՛ս Сборник дипломатических документов. Реформы в Армении, 26 ноября 1912 г.—10 мая 1914 г., Пг., 1915, с. 93—94.

²¹ Զ. Կիրակոսյան, Ռ. Սահակյան, *նշվ. աշխ.*, էջ 168:

²² Նույն տեղում, էջ 261—262:

²³ Նույն տեղում, էջ 233:

գրություն և 6 կետից բաղկացած համաձայնագրի մեջ խոստացված բարենորոգումների միջև առկա հակայական տարբերությունը, ռուսական կառավարությունից խնդրում էր շուտափույթ ստորագրել համաձայնագիրը²⁴։ Ռուսական արտաքին գործերի մինիստրին նմանօրինակ կարծիք էր հայտնում նաև Կ. Պոլսում ռուսական գործերի հավատարմատար Գուլկեիչը, որը թերևս միայն Գիրսին էր զիջում հայկական բարենորոգումների հարցում Թուրքիայից ձեռք բերվելիք զիջումների հնարավորի և անհնարինի սահմանները որոշելու իր իրավասության տեսակետից (տարակուսանքի ենթակա չէ, որ Գուլկեիչը իր արտահայտած կարծիքը նախօրոք համաձայնեցրել էր արձակուրդում գտնվող Գիրսի հետ)։ Նույն խնդրանքով Սազունովին էր գիմում նաև հայ ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշան, որն թրդեն ոչ մեկին չէր զիջում հայկական բարենորոգումների հարցում եվրոպական մայրաքաղաքներում առկա վերաբերմունքի իրազեկության տեսակետից²⁵։

Ինչ վերաբերում է 6 կետանոց համաձայնագրի ստորագրման գործում Գերմանիայի դրդապատճառներին, ապա այստեղ ամեն ինչ ավելի բարդ էր ու հակասական, որը և համաձայնագրի ստորագրումից անմիջապես հետո իրեն զգացնել տվեց գերմանական դիվանագիտության պրակտիկ քայլերում և դրսևորվեց իր իսկ ստորագրած պայմանագրի դեմ արգելքներ հարուցելու մեջ։ ԶԷ՝ որ տվյալ հարցում Գերմանիայի քաղաքականության անկյունաքարը չէր տեղաշարժվել, մնացել էր նույն տեղում։ Այդ քաղաքականության առավել դիպուկ և խտացված բնութագիրը տալիս է հետևյալ պարբերությունը. «Հայկական կոնֆլիկտում Գերմանիայի զբաղեցրած դիրքը արտահայտվում էր միանգամայն որոշակի. նա կտրականապես ելույթ էր ունենում Արևմտյան Հայաստանին անկախություն տրամադրելու դեմ, բոլոր միջոցներով սատարում էր ազգաբնակչության թվաքանակի պակասեցման, իսկ ի վերջո և Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի ոչնչացման միջոցով հայկական հարցի լուծման թուրքական ծրագրին»²⁶։ Ի դեպ, թուրքական կառավարությունը ևս շատ լավ տեղյակ էր այս ամենին, այդ իսկ պատճառով ոչ միայն սառն էր վերաբերվում երբեմն տեղի տալու իմաստով տրվող գերմանական խորհուրդներին, այլև հաճախ ուղղակի դժգոհություն էր հայտնում Գերմանիայի գործողությունների նկատմամբ։ Այդ իսկ պատճառով թուրքական կառավարության կողմից ծայր առան համաձայնագրի նոտայի տեքստը մեծ տերություններին հանձնելու գործի ձգձգման, այդ նոտայի և վերատեսուչներին թուրքական կառավարության տված հրահանգների միջև տեղ գտած անհամապատասխանության երևույթները։ Թուրքական կողմի հենց նման գործելակերպից էր զգուշանում Կ. Պոլսի հայկական պատրիարքը, որը հետագայում այսպես էր շարադրել ժամանակին իրեն հուզած մտքերը. «Սակայն համաձայնության կնքումը՝ կարևոր հաջողություն լինելով հանդերձ, ամեն ինչ չէր։ Անոր տրամադրությունները պետք էր իրագործել, ինչ որ ոչ նվազ դժվար բան էր, հաշվի առնելով թուրքական կառավարության «ի սկզբանե» ունեցած անբարյացակամությունը»²⁷։ Թուրքական կողմը աշխատում էր բացել բարենորոգումների կենսագործումը ձախողելու համար ևս մեկ սողանցք։ 1914 թ. ապրիլի 2-ին Բ. Դուռը գլխավոր վերատեսուչների համար ներկայացված 5 թեկնածուներից իր վերջնական ընտրությունը կանգնեցրեց նորվեգական ռազմական մինիստրության գլխավոր քարտուղար Հոֆֆի և նիդեռլանդական Հնդկաստանի գավառական վարչակազմի ղեկավար Վեստենենկի վրա, որոնք և Կ. Պոլիս ժամանելու հրավեր

²⁴ МОЭИ, серия III, т. I, № 135, М.—Л., 1931, с. 156, նաև № 190, с. 232.

²⁵ Ման լեզում, № 123, էջ 142։

²⁶ Ст. Степанян, Армения в политике империалистической Германии, Ереван, 1975, с. 100.

²⁷ Ձ ա վ ե ն ա ր ք Ե ի ս կ ո ս, Պատրիարքական հուշեր. վավերագրեր և վկայություններ, Կահիրե, 1947, էջ 39։

ստացան: Ապրիլի 16-ին Ֆրանսիայում ռուսական ղեսպան Իզվոլսկին հայտնում էր Սազոնովին, որ Փարիզում վերատեսուչների հետ իր ունեցած զրույցից հետո (նույն օրը նրանց հետ հանդիպել էր նաև գլխավոր վերատեսուչների հարցի հետ առնչվող ողջ անցուղարձում մեծ ակտիվություն ցուցաբերած դ-ր Զավրիևը) երկուսով էլ հանգել էին այն եզրակացության, որ գլխավոր վերատեսուչները հստակ պատկերացում չունեն իրենց առաջիկա պարտականությունների մասին և իրենց համարյա թե համարում են թուրքական ծառայության մեջ գտնվող աստիճանավորներ: Ուստի, Իզվոլսկին խիստ անհրաժեշտ էր համարում, որ հետագայում ևս թուրքիայում ռուսական ղեսպանությունը անհրաժեշտ բանակցությունների միջոցով վերատեսուչներին մանրամասն ծանոթացնի իրադրության յուրահատկությանը, նրանց խորհուրդ տալով հիմնականում հենվել Ռուսաստանի վրա²⁸: Մի քանի օր անց դ-ր Զավրիևը, մեկնելով Բեռլին, Գերմանիայում ռուսական ղեսպան Սվերբեևին հայտնում էր, որ վերատեսուչների հետ ավելի մոտիկից ծանոթանալուց հետո, ինքը որոշ չափով փոխել է իր կարծիքը նրանց մասին: Երկարատև խոսակցություններից հետո հաջողվել էր գլխավոր վերատեսուչներին պարզաբանել նրանց առաքելությունը, բայց մեկ անգամ ևս ընդգծել էր, որ շարունակեն ներգործել նրանց վրա ցանկալի իմաստով, ինչը և Սազոնովին էր հայտնում ղեսպանը իր մայիսի 7-ի հեռագրում²⁹:

Թուրքիայի մեծ վեզիր Սալիդ Հալիմը Գիրսին խնդրում էր մեկ ամսով հետաձգել նոտայի տեքստը մեծ տերություններին հանձնելու պահը՝ երկուշաբթի ղեպուտատների ագրեսիվ տրամադրություններից, քանի որ մեկ ամսից նախատեսվում էր արձակել խորհրդարանը, օտարերկրյա ղեսպանին առանց քաշվելու խոստովանելով, որ թե կառավարության կազմում, թե պառլամենտում ինքը շատ քիչ հեղինակություն ու ազդեցություն ունի: Իր հերթին, Գիրսը պնդում էր նոտան անհապաղ հանձնելու օգտին, համաձայնելով միայն, որ այդ քայլը երկու շաբաթ գաղտնի պահվի: Հունիսի երկրորդ տասնօրյակին հայտնվելով Պետերբուրգում, դ-ր Զավրիևը Սազոնովին տեղեկացրեց այն խարդախ քայլերի մասին, որոնց դիմում էր թուրքական կառավարությունը, աշխատելով գլխավոր վերատեսուչների հետ իրենց ստորագրելիք պայմանագրերի և մշակվող հրահանգների մեջ նկատելիորեն կրճատել նրանց լիազորությունները: Սազոնովը հունիսի 22-ին Գիրսին գրած իր նամակում ղեսպանին հանձնարարում էր կտրուկ չեղարկել նախազգուշացնել Բ. Դռանը՝ հրաժարվել փետրվարի 8-ի համաձայնագրով նախատեսված բարենորոգումները աղճատելու ուղին բռնելուց և հույս չդնել այն բանի վրա, թե Ռուսաստանի ուղղորդությունից կվրիպի նրա գործելակերպը³⁰:

Չնայած Գիրսի վերաբերմունքը վերատեսուչներին թուրքական կառավարության տրվելիք հրահանգների նկատմամբ բավական քամահրական էր, նրա դիրքորոշումը բոլորովին չէր համընկնում նույն հարցում Սազոնովի տեսակետին: Իրոք, ղեսպանի Պետերբուրգ ուղարկվող բոլոր թղթակցություններում ընդգծվում էր, որ «վերատեսուչների գործունեության համար նոտայի տեքստը անվիճելիորեն վճռական նշանակություն ունի, և նրանց իրավունքները բնավ էլ չեն սահմանափակվի նրանից, որ տրվելիք հրահանգներում նոտայի տեքստը բերված չի լինի ամբողջությամբ»³¹: Մինչդեռ Սազոնովը շարունակ պնդում էր հակառակը՝ անպատակահարմար ենք համարում ոչ միայն հայտարարել Դռանը նոտայի տեքստը պարտադիր լինելու մասին, այլև բողոքարկել հրահանգների և պայմանագրի բոլոր այն կետերը, որոնք կհակասեն նրան³²: Արտաքին գործերի մինիստրը իրեն պարզ

²⁸ МОЭИ, серия III, т. 2, № 319, М.—Л., 1933, с. 408.

²⁹ Նույն տեղում, № 376, էջ 489:

³⁰ Նույն տեղում, հ. 3, Մոսկվա—Լենինգրադ, 1933, № 325, էջ 374—375:

³¹ Նույն տեղում, № 219, էջ 274:

³² Նույն տեղում, № 359, էջ 408:

հաշիվ էր տալիս, որ նոտայի տեքստի և հրահանգների միջև եղած զգալի անհամապատասխանությունը ճահճի մեջ կներքաշի բարենորոգումների կենսագործման ողջ համակարգը՝ վերածելով անվերջանալի վեճերի ամբիոնի:

Առաջ անցնելով ասենք, որ Գիրսը անսպասելիորեն սկսեց պնդել, թե ինքը խորապես համոզված է, որ «հասել է պատմական պահ, երբ մենք հնարավորություն ունենք վերջնականապես մեզ ենթարկել Թուրքիան և նրա միջոցով կաթվածահար անել մեր դեմ պատրաստվող թշնամական ուժերը Բալկանյան թերակղզում»³³: 1914 թ. հուլիսի 23-ին էնվեր փաշան Կ. Պոլսում ռուսական դեսպանության ռազմական կցորդ գեներալ Լեոնտևին նույնիսկ հետևյալ առաջարկությունն արեց. «Եթե Ռուսաստանը ցանկանա ուղադրություն դարձնել Թուրքական բանակի վրա և օգտագործի իր հետապնդած նպատակների համար... ապա այդ բանակը կարող է գործի գրվել Ռուսաստանի կողմից՝ ինչպես իր դեմ հանդես գալու մտադրություն ունեցող բալկանյան այս կամ այն պետության բանակը վտանգագրծելու համար, այնպես էլ աջակցելու բալկանյան այն պետությունների բանակներին, որոնք կհակադրվեն Ավստրիային...»³⁴: Եվ այս առաջարկությունը անում էր նույն այն անձնավորությունը, որը դրանից տառացիորեն երեք օր առաջ՝ հուլիսի 20-ին, որպես երկրի ռազմական ղեկավար, բացահայտ սպառնալիքների միջոցով ստիպեց երիտթուրքերի կոմիտեի սակավաթիվ, բայց և այնպես դեռևս տատանվող անդամներին համաձայնել ստորագրելու Թուրք-գերմանական դաշինք կնքելու գաղտնի պայմանագիրը: Իսկ Կ. Պոլսում ռուսական դեսպանը այդ պահին մեծ հավատով էր լցված նմանօրինակ առաջարկությունների նկատմամբ: Սակայն, ինչպես և պետք էր սպասել, ապագա իրադարձությունները վաղորդյալն մշուշի պես ցրեցին այդ պատրանքը և Գիրսի թղթակցություններից մի տեսակ ինքնաբերաբար դուրս մղվեցին «Թուրքիան վերջնականապես մեզ ենթարկելու համար հասած պատմական պահի» ոգով դատողությունները և կարճ ժամանակ անց նրանցում ամբողջովին և վերջնականապես արմատավորվեցին տրամագծորեն հակառակ դատողություններ: Եզրակացվում էր, որ «Վերջին մի քանի շաբաթվա ընթացքում այն (քաղաքական իրադրությունը Թուրքիայում—Ռ. Ա.) համառորեն զարգանում է միայն մեկ ուղղությամբ՝ Թուրքիան ուժգնորեն պատերազմի նախապատրաստելու ուղղությամբ... Վերջինս (պատերազմը Թուրքիայի և Ռուսաստանի միջև—Ռ. Ա.), ամենայն հավանականությամբ անխուսափելի է...»³⁵:

Հրաժարվելով «զգացմունքային» դիվանագիտություն վարելու փորձերից. Գիրսը վերադարձավ սթափ դատողության վրա հիմնված դիվանագիտությանը, ինչը վկայում են մասնավորապես Սազոնովին հղած նրա զգուշացումները. «Բայց պատերազմը կարող է ծագել նաև անկախ (թուրքական) կաբինետի որոշումից, գերմանացիների կամայական կարգադրությունների հետևանքով, որոնք, իրենց ձեռքում ունենալով Թուրքական նավատորմը, կարող են ծով դուրս գալ և ինքնազուխ հարձակվել մեզ վրա»³⁶: Գուցե հատկապես շեշտենք նաև այն, որ հոկտեմբերի 16-ին Ռուսաստանի սեփովյան նավահանգիստների վրա գերմանա-թուրքական նավատորմի ավազակային հարձակումը կատարվել էր նաև թուրքական կառավարության անդամների սանկցիայով:

Վերադառնանք կրկին հայկական բարենորոգումների հարցին: Բնութագրելով գլխավոր վերատեսուչներին՝ Գիրսը գրում էր. «Կարծում եմ, նրա հետ (Հոֆֆի—Ռ. Ա.) կարելի է աշխատել, բայց անհրաժեշտ է, որպեսզի մեր հյուպատոսները գործնականում օժանդակեն նրան: Վեստենենկը... խոստացավ ամեն ինչում խորհրդակցել ինձ հետ, բայց, դժբախտաբար, նրա

³³ Նույն տեղում, հ. 6, Մոսկվա—Լենինգրադ, 1935, № 60, էջ 54:

³⁴ Նույն տեղում, № 8, էջ 8:

³⁵ Նույն տեղում, № 354, էջ 362—363:

³⁶ Նույն տեղում, էջ 362:

հիմնական մտահոգությունը նյութապես իրեն ապահովելն է»³⁷։ Ըստ երեւելիության, վեստենենկի բնավորության հենց այս գիծն էր չափազանց դուր եկել ներքին գործերի մինիստր Թալեաթ փաշային, որը, պատերազմի նախօրեին պաշտոնական այցով ժամանելով Ռուսաստան, Սազոնովի հետ բանակցություններ վարելիս մեծ համակրանքով արտահայտվեց... պ. վեստենենկի մասին»³⁸։

Հետաքրքիր մանրամասն. մեծ վեզիր Սալիդ Հալիմը այդպես էլ չհամարձակվեց նոտայի տեքստը անձամբ հանձնել վերատեսուչներին, որ արեց Թալեաթը՝ 1914 թ. հունիսի 29-ին, փաստաթուղթը հանձնելով Հոֆֆին³⁹։

Սակայն սկսված համաշխարհային պատերազմի առաջին իսկ օրից իրադարձությունները ծավալվեցին ի վնաս հայկական բարենորոգումների։ Եվ դա ամենից շուտ հասկացան իրենք՝ հայերը։ Օգոստոսի 5-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդը Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին գրած նամակում ուղղակի նշում էր. «Ք. Դուռը, օգտվելով Գերմանիայի թաքուն քաջախերանքից, կարողացավ անվավեր համարել ս. թ. հունվարի 26-ի պայմանագիրը, այդ իսկ պատճառով մշակված բարենորոգումները ոչ մեկին չեն բավարարում»⁴⁰։ Վորոնցով-Դաշկովին այդ նամակն ուղարկեց Պետերբուրգ՝ մինիստրների խորհրդի նախագահ Ի. Լ. Գորեմիկինին, վերջինս էլ այն վերահասցեագրեց Սազոնովին, խնդրելով շարադրել իր եզրակացությունները։ Օգոստոսի 17-ին Սազոնովը հայտնում էր. «Այժմյան քաղաքական իրադրությունը և Թուրքիայի հետ հարաբերությունների մոտավոր խզման պայմաններում Փոքր Ասիայի հայկական վիլայեթներում բարենորոգումների կենսագործումը բացարձակապես անիրագործելի է»⁴¹։ Այնուհետև, մինիստրը գրում էր, որ այնքան ժամանակ, քանի դեռ պատերազմը Թուրքիայի և Ռուսաստանի միջև չի դարձել փաստ, պետք է օգտագործվեն բոլոր դիվանագիտական ուղիները այն կանխելու համար, նամակն ավարտվում էր հետևյալ տողերով. «...ցանկալի կլիներ իրականացնել ամեն տեսակի նախապատրաստական գործողություններ՝ սահմանի վրայով արագորեն զենք և զինամթերք տեղափոխելու և արտասահմանյան բնակչությանը (նկատի ունեւոր հայերին և Ռուսաստանին համակրող քրդերին—Ռ. Ա.) հանձնելու նպատակով, երբ խզումը կկայանա կամ կդառնա անխուսափելի»⁴²։

Պետական մակարդակով Ռուսաստանի ռազմաֆինանսական օգնությունը, ինչ խոսք, վճռորոշ նշանակություն կունենար Արևմտահայաստանի հայազգաբնակչության ինքնապաշտպանությունը կազմակերպելու գործում։ 1914 թ. օգոստոսի 16-ին Կովկասյան բանակի հետախուզական բաժանմունքի պետ կապիտան Դրացենկոն բանակի շտաբի պետին հասցեագրած զեկուլցում արդարացիորեն նշում էր. «Բնակչության զանգվածային զինված ինքնապաշտպանության դեպքում ջարդերի հետևանքով հայերի կորուստները հնարավոր է հասցնել նվազագույնի։ Փորձը ցույց է տվել, որ մահմեդական ավազակախմբերը և քրդական հրոսակախմբերը լուրջ ավերածություններ չեն գործում և նույնիսկ չեն հարձակվում, եթե պաշտպանվող գյուղացիներին ձեռքում կա բավարար քանակությամբ զենք»⁴³։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին թուրքական իշխանությունները եկել էին այն համոզման, որ «Ռեֆորմների շուրջը տեղի ունեցած բանակցություններից (1912—1914 թթ.) հետո հայերը վաղ թե ուշ հասնելու էին իրենց ինքնավարության իրականացմանը»⁴⁴։ Դա արտաբերին

³⁷ Նույն տեղում, հ. 4, Մոսկվա—Լենինգրադ, 1932, № 149, էջ 200։

³⁸ Նույն տեղում, հ. 5, Մոսկվա—Լենինգրադ, 1933, հավելված 6, էջ 448։

³⁹ Նույն տեղում, հ. 4, № 199, էջ 245։

⁴⁰ Նույն տեղում, հ. 6, № 191, էջ 183։

⁴¹ Նույն տեղում։

⁴² Նույն տեղում, էջ 184։

⁴³ Sht. A. O. Арутюнян, Кавказский фронт, 1914—1917, Ереван, 1971, 55.

⁴⁴ Զ. Ս. Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաւանի առաջ, դիդ. Երրդ, Երևան, 1983, էջ 10։

քաղաքականության նպատակների ճանապարհին մի խոչընդոտ էր, որի վերացման համար Թուրքիայում պատրաստ էին շատ թանկ վճարել:

Հայկական բարենորոգումների ընթացքում Ռուսաստանի զբաղեցրած հայանպաստ դիրքորոշումը լիովին արժեզրկեց Գերմանիայի՝ կեղծ հայասեր ներկայանալու կիսատ-պռատ փորձերը:

Այդ նույն հարցի շուրջը հրահրված դիվանագիտական պատերազմը շավարտվեց հոկտեմբերի 20-ի ցարական մանիֆեստով, որով Ռուսաստանը պաշտոնապես պատերազմ հայտարարեց Թուրքիային: Այն մեկ անգամ ևս ապացուցեց այն հայտնի ճշմարտությունը, որ պատերազմը նույնպես դիվանագիտություն է՝ միայն թե այլ միջոցներով ու եղանակներով:

ПОЛИТИКА РОССИИ И ГЕРМАНИИ В ВОПРОСЕ РЕФОРМ В ЗАПАДНОЙ АРМЕНИИ (1912—1914 гг.)

Р. Б. АДАМЯН

Р е з ю м е

Летом 1913 г. в Константинополе между представителями великих держав начались переговоры по вопросу о проведении реформ в Западной Армении. На обсуждение драгоманов посольств великих держав были представлены русокий и турецкий проекты реформ. Все попытки держав Тройственного союза взять за основу турецкий проект не увенчались успехом и практически на переговорах рассматривался только русский проект реформ. Окончательный текст договора реформ в Западной Армении, подписанный 26 янв. (8 февр. 1914 г.), был очень далек от первоначальных требований русского проекта.

Начавшаяся первая мировая война дала возможность младотурецкому режиму фактически аннулировать договор.

THE POLICY OF RUSSIA AND GERMANY REGARDING THE INTRODUCTION OF REFORMS IN WEST ARMENIA (1912—1914)

ADAMIAN R. B.

S u m m a r y

In the summer of 1913 talks were started in Constantinople among the representatives of the great powers regarding the introduction of reforms in West Armenia. Russian and Turkish projects of reform were presented for discussion by the dragomans of embassies of the great powers. All the attempts of the powers of the Triple Alliance to take the Turkish project as a basis failed and practically only the Russian project of reforms was considered. The final text of the agreement on reforms in West Armenia signed on the 26th of January (8th February), 1914, was very far from the original requirements of the Russian project.

The outbreak of World War I gave the Regime of the Young Turks the possibility of actually annulling the agreement.